ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 5 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Էլիզա Բայրամյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Էլիզա Բայրամյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածն այնքանով, որքանով նշված հոդվածով նախատեսված չէ իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ Դատական ակտի բողոքարկման իրավական կարգավորում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածն այնքանով, որքանով նշված հոդվածը չի պարունակում արգելող դրույթ «անձի ազատ տեղաշարժի» և «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գալու» իրավունքների չսահմանափակման վերաբերյալ հատուկ կարգավորում, ճանաչել Հա-

յաստանի Հանրապետության Սահմանադրության 40-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող հոդվածով այնքանով, որքանով նախատեսված չէ իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ դատական ակտի բողոքարկման իրավական կարգավորում, հակասում է ՀՀ Սահմանադրությանը: Ըստ դիմողի՝ օրենսգրքում նման կարգավորում չնախատեսելն իրավական բաց է, որը խաթարում է անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումը, զրկում դատարանի կայացրած որոշման իրավաչափությունն ստուգման ներկայացնելու իրավական հնարավորությունից:

Դիմողը նշում է, որ բողոքարկման ինստիտուտի ողջ տրամաբանությունը հանգում է նրան, որ մի օղակի ապօրինի վարքագծի վիճարկումը հասցեագրված լինի բացառապես վերադաս ատյանին: Մինչդեռ տվյալ դեպքում անձը զրկված է ստորադաս դատարանի առերևույթ ոչ իրավաչափ դատական ակտերի բողոքարկման հնարավորությունից:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող հոդվածն այնքանով, որքանով չի պարունակում արգելող դրույթ «անձի ազատ տեղաշարժի» և «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գալու» իրավունքների չսահմանափակման վերաբերյալ հատուկ կարգավորում, հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ա) խնդրո առարկա դիմումն ակնհայտ անհիմն է:

Դիմողի կողմից վիճարկվող հոդվածով սահմանվում է հայցի ապահովման միջոցները: Դիմողի փաստարկն առ այն, որ, մասնավորապես, «Օրենսգրքում նման կարգավորում չնախատեսելը իրավական բաց է, որի բացակայությունը խաթարում է անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումը», ևս ցույց է տալիս, որ դիմողի

առաջադրած խնդիրը պայմանավորված չէ նրա կողմից վիճարկվող հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականությամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներով նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից Սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող ընդհանուր պահանջները, դիմումին կցվող նյութերի շրջանակը, իսկ անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման է նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ դիմումը պետք է պարունակի նաև Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը 24.11.2009թ. ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող դրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Խնդրո առարկա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող հոդվածի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը,

բ) դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դիմողի կողմից վիճարկվող հոդվածը նրա նկատմամբ կիրառվել է միջանկյալ դատական ակտերով: Միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորությանը ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշմամբ նշել է, որ օրենսդրի սահմանած իրավակարգավորումն առ այն, որ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը կարող են վերաքննության կարգով բողոքարկվել միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և այլ օրենքներով

նախատեսված դեպքերում՝ վերաբերում է ոչ թե միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանն ընդհանրապես, այլ բողոքարկման կարգին: Այսինքն՝ օրենսդիրը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ միջանկյալ ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն՝ չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-922 որոշմամբ ամրագրել է նաև, որ «... օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»:

Սույն գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ կայացված միջանկյալ ակտերը, համապատասխանաբար՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու և հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումները, գործի վարույթի հետագա ընթացքը չկասեցնող որոշումներ են, իսկ օրենսդիրը դրանց բողոքարկման անմիջական կարգ չի նախատեսել, հետևաբար՝ դրանք ոչ թե բողոքարկելիությունից զրկված ակտեր են և այդ առումով՝ նաև վերջնական, ինչը կարևոր պայման է կոնկրետ սահմանադրական վերահսկողության պարագայում, այլ գործն ըստ էության լուծող դատական ակտերի շրջանակում բողոքարկման ենթակա ակտեր:

ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը,

սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին և դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ նաև այն, որ դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Էլիզա Բայրամյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

5 դեկտեմբերի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-35